Երկրորդ ընթերցում
Կ-065-20.03.2019-ՖՎ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Սույն օրենքը տարածվում է նաև մինչև 5.000.000 (ներառյալ՝ 5.000.000 ՀՀ դրամը) դրամ գումարի չափով և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական նշանակության և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին մինչև 5.000.000 (ներառյալ՝ 5.000.000 ՀՀ դրամը) դրամ գումարի չափով և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված կրեդիտների վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) սպառող.

ա. անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման նպատակով կրեդիտ ստացող ֆիզիկական անձ,

բ. գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող ֆիզիկական անձ, կամ գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող անհատ ձեռնարկատեր,

գ. կրեդիտ ստացող՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել՝ «հարյուր հազար դրամը չգերազանցող և» բառերը:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝ «փոստային» բառը փոխարինել «էլեկտրոնային» բառով:

2) 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«2.Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, որը չպետք է գերազանցի մեկ

ամիսը, սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:»:

3) 3-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Սպառողն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Սպառողն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը ստանալ կրեդիտավորողի տարածքում՝ առձեռն, ինչը չի բացառում նույն տեղեկատվությունը սպառողին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տրամադրելու կրեդիտավորողի պարտականությունը: Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով և առձեռն ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առոչինչ է:

Ընդ որում, կրեդիտավորողն իրավունք չունի սպառողին պարտադրելու կամ սպառողի համար այնպիսի իրավիճակ ստեղծելու, որ սպառողը հրաժարվի սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իր իրավունքից:».

4) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

<<1. Այն դեպքում, երբ կրեդիտավորողի կողմից խախտվել է սպառողի՝ սույն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված որևէ իրավունք, ապա սպառողն իրավունք ունի անմիջապես դիմելու դատարան, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ առևտրային արբիտրաժ, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին:

2"Կրեդիտավորողի ծառայություններից օգտվող սպառողի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով, առևտրային արբիտրաժի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ հօգուտ սպառողի գանձվում է երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) կրեդիտավորողը ձեռնարկել է սպառողի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է սպառողի իրավունքի խախտումը, և

2) սպառողի իրավունքի խախտման հետևանքով սպառողը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է կրեդիտավորողը: Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված սպառողի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ սպառողի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

3. Եթե կրեդիտավորողը կրեդիտավորման պայմանագրում չի ներառել սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով

նախատեսված՝ կրեդիտավորման պայմանագրում ներառման ենթակա նվազագույն տեղեկությունները (պայմանները), ապա կրեդիտավորողն իր նախաձեռնությամբ կամ սպառողի պահանջով պարտավոր է կրեդիտավորման պայմանագիրը համապատասխանեցնել սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտով նախատեսված պահանջներին՝ խախտումը հայտնաբերելու կամ սպառողի պահանջը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Կրեդիտավորման պայմանագիրը սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխանեցնելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է կրեդիտավորողը:>>:

Հոդված 6. Անցումային դրույթներ"

1"Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո: Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով փոփոխվող 20-րդ հոդվածի 2-րդ մասը տարածվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված այն կրեդիտավորման պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների նկատմամբ, որոնց խախտումները տեղի են ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՆԱԽԱԳԾԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ ընթերցում

Կ-065-20.03.2019-ՖՎ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՐԵԴԻՏԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Սպառողական կրեդիտավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի հունիսի 17-ի ՀՕ-122-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Սույն օրենքը տարածվում է նաև մինչև 5.000.000 (ներառյալ՝ 5.000.000 ՀՀ դրամը) դրամ գումարի չափով և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված գյուղատնտեսական նշանակության և «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր,~~փոքր և միջին~~առևտրային կազմակերպություններին և անհատ

ձեռնարկատերերին (այսուհետ նաև՝ ՓՄՁ սուբյեկտ) *մինչև 5.000.000 (ներառյալ՝ 5.000.000 << դրամը) դրամ գումարի չափով և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված* կրեդիտների վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդհոդվածի 1-ինմասի 6-րդկետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) սպառող.

ա. անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման նպատակով կրեդիտ ստացող ֆիզիկական անձ,

բ. գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող ֆիզիկական անձ, կամ գյուղատնտեսական նշանակության կրեդիտ ստացող անհատ ձեռնարկատեր,

գ. կրեդիտ ստացող՝ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» օրենքով սահմանված՝ գերփոքր~~, փոքր և միջին~~ առևտրային կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից հանել՝ «հարյուր հազար դրամը չգերազանցող և» բառերը:

Հոդված 4. Օրենքի 17-րդ հոդվածում՝

5) 1-ին մասում՝ «փոստային» բառըփոխարինել «էլեկտրոնային» բառով:

6) 2-րդ մասը շարադրելնորխմբագրությամբ՝

«2.Կրեդիտավորողը պարտավոր է իր կողմից կամ կրեդիտավորման պայմանագրով սահմանված պարբերականությամբ, ~~բայց ոչ պակաս, քաներեսնօրյա~~*որը չպետք է գերազանցի մեկ ամիսը,*~~պարբերականությամբ,~~ սպառողին ներկայացնել կրեդիտավորման պայմանագրից բխող սպառողի պարտավորությունների և դրանց առաջացման հիմքերի և մարումների վերաբերյալ գրավոր տեղեկատվություն, այդ թվում՝ սպառողի կողմից իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրեդիտավորողի կողմից կիրառվող կամ կիրառված պատասխանատվության միջոցների (տուժանքի կամ սպառողի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների) սպառիչ ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը՝ էլեկտրոնային կապի միջոցով, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի: Ընդ որում, սույն

մասում նշված տեղեկատվությունը համարվում է պարտադիր ներկայացման տեղեկատվություն:»:

7) 3-րդ մասը շարադրելնորխմբագրությամբ՝

«3. Սպառողն իր գրավոր, այդ թվում՝ էլեկտրոնային եղանակով ներկայացված դիմումի հիման վրա կարող է հրաժարվել սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իրավունքից՝ պարտադիր ներկայացման տեղեկատվությունը փոստային կամ կապի այլ միջոցներով ստանալու պայմանով: Սպառողն իրավունք ունի նաև սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը ստանալ կրեդիտավորողի տարածքում՝ առձեռն, ինչը չի բացառում նույն տեղեկատվությունը սպառողին փոստային, էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով տրամադրելու կրեդիտավորողի պարտականությունը: Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով սահմանված էլեկտրոնային, փոստային կամ կապի այլ միջոցներով և առձեռն ստանալու սպառողի իրավունքը սահմանափակող պայմանը կամ համաձայնությունն առոչինչ է:

Ընդ որում, կրեդիտավորողն իրավունք չունի սպառողին պարտադրելու կամ սպառողի համար այնպիսի իրավիճակ ստեղծելու, որ սպառողը հրաժարվի սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով սահմանված տեղեկատվությունը էլեկտրոնային կապի միջոցով ստանալու իր իրավունքից:».

8) 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. *Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.*

<<1. Այն դեպքում, երբ կրեդիտավորողի կողմից խախտվել է սպառողի՝ սույն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված որևէ իրավունք, ապա սպառողն իրավունք ունի անմիջապես դիմելու դատարան, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ առևտրային արբիտրաժ, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին:

2. Կրեդիտավորողի ծառայություններից օգտվող սպառողի իրավունքների խախտման փաստը հաստատվելու դեպքում դատարանի վճռով, առևտրային արբիտրաժի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ հօգուտ սպառողի գանձվում է երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝

1) կրեդիտավորողը ձեռնարկել է սպառողի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է սպառողի իրավունքի խախտումը, և

2) սպառողի իրավունքի խախտման հետևանքով սպառողը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է կրեդիտավորողը:

Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված սպառողի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ սպառողի իրավունքը սահմանափակող կամ բացառող դրույթ:

3. *Եթե կրեդիտավորողը կրեդիտավորման պայմանագրում չի ներառել սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված՝ կրեդիտավորման պայմանագրում ներառման ենթակա նվազագույն տեղեկությունները (պայմանները), ապա կրեդիտավորողն իր նախաձեռնությամբ կամ սպառողի պահանջով պարտավոր է կրեդիտավորման պայմանագիրը համապատասխանեցնել սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտով նախատեսված պահանջներին՝ խախտումը հայտնաբերելու կամ սպառողի պահանջը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Կրեդիտավորման պայմանագիրը սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխանեցնելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է կրեդիտավորողը:>>:*

Հոդված 6. Անցումային դրույթներ.

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման ~~օրվան հաջորդող տասներորդ օրը~~ *օրվանից մեկ ամիս հետո*: Սույն օրենքի գործողությունը տարածվում է սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրը և դրանից հետո կնքված պայմանագրերի ~~վրա~~ *և դրանցից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:*

2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով փոփոխվող 20-րդ հոդվածի 2-րդ մասը տարածվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված այն կրեդիտավորման պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների նկատմամբ, որոնց խախտումները տեղի են ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» (Կ-065-065[2] - 20.03.2019-ՖՎ) ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ երկրորդ ընթերցումից առաջ ներկայացված առաջարկների

N	ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ	ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐՏԵՂ ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ	ԱՌԱՋԱՐԿԸ	ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ (ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ) ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ	ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ Ի ՈՐՈՇՈՒՄԸ
1	ՀՀ Կառավարություն	1. «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ 1) 1-ին հոդված	1) 1-ին հոդվածում «գերփոքր» բառից հետո՝ հանել «փոքր և միջին» բառերը, իսկ «(այսուհետ նաև՝ ՓՄՁ սուբյեկտ)» բառերից հետո ավելացնել «մինչև 5.000.000 (ներառյալ՝ 5.000.000 ՀՀ դրամը) դրամ գումարի չափով և (կամ) դրան համարժեք արտարժույթով տրամադրված» բառերը: 2) 2-րդ հոդվածում «գերփոքր» բառից հետո, հանել «փոքր և միջին» բառերը:	1) Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: 2) Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	1) Ընդունվել է: 2) Ընդունվել է:

		2) 2-րդ հոդված	3) 4-րդ հոդվածի 2-րդ մասում «բայց ոչ պակաս, քան երեսնօրյա պարբերականությամբ» բառերը փոխարինել «որը չպետք է գերազանցի մեկ ամիսը» բառերով:	3) Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	3) Ընդունվել է:
		3) 4-րդ հոդվածի 2-րդ մաս 4) նախագիծ	4) նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 5-րդ հոդվածով. **Հոդված 5.** Օրենքի 20-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Այն դեպքում, երբ կրեդիտավորողի կողմից խախտվել է սպառողի՝ սույն օրենքով կամ դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված որևէ իրավունք, ապա սպառողն իրավունք ունի անմիջապես դիմելու դատարան, իսկ օրենքով նախատեսված դեպքում՝ առևտրային արբիտրաժ, ինչպես նաև Ֆինանսական համակարգի հաշտարարին: 2. Կրեդիտավորողի ծառայություններից օգտվող սպառողի իրավունքների խախտման փաստը	4) Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:	4) Ընդունվել է:

			հաստատվելու դեպքում դատարանի վճռով, առևտրային արբիտրաժի կամ Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշմամբ հօգուտ սպառողի գանձվում է երեք հարյուր հազար դրամ, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարան, առևտրային արբիտրաժ կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին դիմելու օրվա դրությամբ՝ 1) կրեդիտավորողը ձեռնարկել է սպառողի խախտված իրավունքը վերականգնելու համար անհրաժեշտ բոլոր գործողությունները և փաստացի վերացրել է սպառողի իրավունքի խախտումը, և 2) սպառողի իրավունքի խախտման հետևանքով սպառողը փաստացի չի կրել նյութական վնաս, իսկ վնաս կրելու դեպքում այն փոխհատուցել է կրեդիտավորողը: Ընդ որում, սույն հոդվածով նախատեսված սպառողի իրավունքը չի կարող մեկնաբանվել որպես վնասների հատուցում պահանջելու՝ սպառողի իրավունքը		

			սահմանափակող կամ բացառող դրույթ: 3. Եթե կրեդիտավորողը կրեդիտավորման պայմանագրում չի ներառել սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով նախատեսված՝ կրեդիտավորման պայմանագրում ներառման ենթակա նվազագույն տեղեկությունները (պայմանները), ապա կրեդիտավորողն իր նախաձեռնությամբ կամ սպառողի պահանջով պարտավոր է կրեդիտավորման պայմանագիրը համապատասխանեցնել սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտով նախատեսված պահանջներին՝ խախտումը հայտնաբերելու կամ սպառողի պահանջը ներկայացնելու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում: Կրեդիտավորման պայմանագիրը սույն օրենքի 4-րդ հոդվածով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով		

		5) 5-րդ հոդված	նախատեսված պահանջներին համապատասխանեցնելու հետ կապված բոլոր ծախսերը կրում է կրեդիտավորողը:»: 5) 5-րդ հոդվածում «օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «օրվանից մեկ ամիս հետո» բառերով, իսկ «վրա» բառը՝ «և դրանցից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասի:» բառերով, ինչպես նաև սույն հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2-րդ մասով. «2. Սույն օրենքի 5-րդ հոդվածով փոփոխվող 20-րդ հոդվածի 2-րդ մասը տարածվում է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը կնքված այն կրեդիտավորման պայմանագրերի և դրանցից ծագած հարաբերությունների նկատմամբ, որոնց խախտումները տեղի են ունեցել սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո:»:	5) Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	5) Ընդունվել է:

		2. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ 1) 1-ին հոդվածի 1-ին մաս 2) 1-ին հոդվածի 2-րդ մաս	1) 1-ին հոդվածի 1-ին մասից հանել «Սույն մասից բացառություն են կազմում» բառերը, իսկ «գերփոքր» բառից հետո՝ «փոքր և միջին» բառերը: 2) 1-ին հոդվածի 2-րդ մասից հանել «բացառությամբ» բառը, «գերփոքր» բառից հետո՝ «փոքր և միջին» բառերը, իսկ «կրեդիտների որոնք» բառերը փոխարինել «կրեդիտները» բառով: 3) 2-րդ հոդվածում «օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «օրվանից մեկ ամիս հետո» բառերով, իսկ «պայմանագրերի» բառից հետո լրացնել «և դրանցից ծագած	1) Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: 2) Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: 3) Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	1) Ընդունվել է: 2) Ընդունվել է:

		3) 2-րդ հոդված	հարաբերությունների» բառերը:		3) Ընդունվել է:
		3. «Վարկային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ 1) 1-ին հոդված 2) 2-րդ հոդված	1) 1-ին հոդվածում «գերփոքր» բառից հետո՝ հանել «փոքր և միջին» բառերը: 2) 2-րդ հոդվածում «օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերը փոխարինել «օրվանից մեկ ամիս հետո» բառերով, իսկ «պայմանագրերի» բառից հետո լրացնել «և դրանցից ծագած հարաբերությունների» բառերը:	1) Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն: 2) Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	1) Ընդունվել է: 2) Ընդունվել է: